Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

№ 5

ԻՍ ԷԿԱԼԱՉԷ

(ԹՕՄԱՆԹ ԿՕԲԱ)

ԼՈՒՍՆԵԱԿ ԳԻՇԵՐԻՆ...

ԷՍԿԻԶ

Թարգմ. Դ. Կ.

899.962.1
Б-35

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ. 1904 թ.
Մաղաքեաճ փողոց № 15
(62)

688
-6 NOV 2011
899.962.1
5-35

ՎՐԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

№ 5

ԻԱ ԷԿՎԱԼԱՁԷ

(ԹՕՄԱԱՆԹ ԿՕԲԱ)

ԼՈՒՍՆԵԱԿ ԳԻՇԵՐԻՆ...

ԷՍԿԻԶ

Թարգմ. Դ. Կ.

Տպարան Ընկ. Ս. Նազարեանցի «ՀԵՐՄԷՍ»
Մադաթեան փողոց № 15
(62)

15.04.2013

74.564

-6 NOV 2013

Дозволено цензурою, 12 Октября 1904 года. г. Тифлисъ.

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССР
Им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆ.

861
41

ԼՈՒՍՆԵԱԿ ԳԻՇԵՐԻՆ...

ԷՍԿԻԶ

Պայծառ լուսի՛ն, մի՛, մի կանչի՛ր ինձ. խնդրում եմ, մի՛ հրապուրիր։ Մի՞թէ ժամանակ ունեմ, օրհնած, որ հետեւեմ քո շողշողուն ընթացքին։ Հօ տեսնո՞ւմ ես, ինչ դրութեան մէջ եմ։ Ահա՛, այս թուերով նախշած թղթի կոյտերը, ահա և այս հաշուի ջարդուած համրիչը։ Ամբողջ գիշերը աքիսի նման անքուն պիտի նստեմ և չխչխկացնեմ համրիչի գարերը... Ուրիշ ի՞նչ կարող եմ անել։

Երանի քեզ—լուսի՛ն, որ ազատ ես... իսկ ե՞ս.—մի փոքրիկ չնչին մարդ, մի անլեզու և անխօս գրագիր...

Սակայն ումի՞ց դժգոհամ։ Իմ վիճակս է այս պիտի լռեմ գերեզմանի պէս և աշխատեմ իբրև անասուն։ Ուրիշ ամեն ինչ արգելուած է ինձ համար...

Ի՞նչ ես ժպտում։ Գուցէ չէ՞ս հաւատում, որ աշխարհի երեսին այս տեսակ վիճակ էլ կայ։ Ուրեմն լսիր...

Երբ առաջին անգամ ինձ ճանաչեցի, չափահաս դառայ, ամենքին հաւատացնում էի, որ ես մարդ եմ ու մարդու պէս էլ պիտի ապրեմ։

Ո՞վ ասաց, ոչ թէ մարդ, այլ խօսող մեքենայ ես և ուրիշ ոչինչ, սուլեց ինձ աշխարհը։ Զայրացայ դարձայ, կամակոր։ Ինչ որ ասում էին, ես միշտ հակառակն էի անում երբ մի բան էին պատուիրում, միւսն էի կատարում։ Սրանով ուզում էի ապացուցանել, որ ես մեքենայ չէի, որ ես էլ ունէի իմ հայեացքը, իմ կարծիքը և իմ ցանկութիւնը...

—Գիժ հօ չէ՞ս, գոռաց հայրս։

—Իրաւ...կապելու է, աւելացրեց մայրս։ Սիրտս խոցուեց, երբ տանեցիք այսպիսի վիրաւորանք պատճառեցին։ Հայհոյեցի, պախարակեցի իմ հարազատ ծնողներիս, նրանց ասածներին երկուսով պատասխանեցի և տանից հեռացայ։

Հալածուած թռչունի նման սկսեցի թափառել աշխարհէ աշխարհ։ Սար ու ձոր ընկայ, դաշտ ու անտառ ոտի տակ տուի, բայց, սիրելիս, ոչոք ինձնով չը հետաքրքրուեց։ Ո՞վ ես, ո՞րտեղացի, ո՞րտեղից ես եկել, գոռաց դաժան սարը, սև ժառախուղով ծածկեց կատարը և երեսը շուռ տուեց։

—Զայնդ կտրի՛ր, չէ՞ս տեսնում քամին է ինձ գուրգուրում, զայրացաւ անտառը. յանկարծ մի այնպիսի ուժով օրօրուեց և գլխիս վրայ այնքան տերև թափեց, որ քիչ էր մնում խեղդուէի... Խորտակուած սրտով անտառից դուրս փախայ և ցնորուածի պէս վազեցի դէպի ներքև։ Հանդիպեցի գետին... Կանգ առայ, անվստահ նստեցի նրա ափին, երեսս լուացայ և մտազբաղ սկսեցի դիտել։

Գեղեցիկ էր սարի այդ վճիտ ջուրը։ Լորի նման ոստոստում էր ծաղիկներով զարդարուած ափերով և դիւթիչ ձայնով ինչ որ երգում էր։ Հետևեցի ալիքների յուզմունքին, ականջ դրի գետի մրմունջին։ Քարից քար թռչող ալիքները հաճոյանում էին արևին, պսպղում էին կարծես կուրծքը մարգարիտներով զարդարուած։ Արևն էլ վերևից հպարտ հրճւում էր... Երկար նստած էի գետի ափին, բայց չը կարողացայ իմանալ՝ արտասւում էր, թէ ծիծաղում այդ չարա-

ճրճի վճիտ ջուրը, օրհնում էր իր ծնած օրը, թէ անիծում այն մեծ քարերին, որոնք արգելք էին ճանապարհին և խանգարում էին նրան ազատ ոստոստալ... Յիշում եմ միայն, որ երջանկութիւն ներշնչեց ինձ գետի մրմունջը, և ես էլ զգացի ապրելու քաղցրութիւնը։ Ես էլ փափագեցի գործել, ուզեցի խօսել, երգել, պարել։ Սամսոնի նման վեր կացայ, սև մաքերով պաշարուած ու ոգևորուած գոչեցի.

—Ապա, ծափ տու, ուզում եմ պարել։

—Հողեմ քու գլուխ՝ը, քաւթառ պառաւի նման արձագանք տուեց անտառը։

—Ծափ տու, ասում եմ, դարձեալ կանչում էի ես և այծեամի նման քնութեան ծոցում ոստոստում։ Յոգնեցի, երանութեամբ հարբած գետնին փռուելով ծաղիկները զրկեցի։

—Հեռացի՛ր, կորի՛ր, մի՛ զրկիր կեանքից, գոռացին ծաղիկները և դժգոհութեամբ սկսեցին գլուխները շարժել։ Սկզբում նեղացայ նրանց յանդիմանութիւնից, բայց յետոյ ամաչեցի իմ վարմունքից՝ ծաղիկները բոլորովին կոխկռտել էի։ Ուշքի եկայ և զգացի, որ ես օդային էակ չէի, այլ մի կոպիտ, անտաշ մարդ։

Կենսաբոյր բնութիւնը ինձ հետ ոչ մի կապ չունէր... Ճնացի որբի նման ամենից թողած, անկարեկից։—Ո՜հ, որքան ծանր է մենակութիւնը...

Սաստիկ քաղց զգացի, ստամոքս սկսեց այրուել, և մարմինս թուլացաւ։ Հաւաքեցի չուխայիս փէշերը և շտապեցի դէպի գիւղը։ Այնտեղ մի բարեկամ ունէի, ուզղակի դիմեցի նրան։

—Ի՞նչ ես կամենում, դժգոհ հարցրեց բարեկամս այն ժամին, երբ ես պատրաստուում էի ցնծութեամբ գրկել նրան և համբուրել լայն ճակատը։

—Բարեկամութիւն, կարեկցութիւն.— պատասխանեցի անվստահ։

—Կեանքն անողոք է... Ի՞նչ ունես։

—Անկեղծ սիրտ և անձնազոհ սէր բարեկամներիս համար, պատասխանեցի կրկին։

—Այդ ամենը լոկ խօսքեր են... փող, փող ունե՞ս։ Որպէս նետահար արծիւ ես վայր ընկայ երկնքից գարշահոտ երկրի վրայ։ Փողի անունը լսելու պէս յիշեցի իմ և մարդկանց յարաբերութիւնները... Մի քանի օր Ճնացի բարեկամիս մօտ. բերանիս թիքէն համարում էր... տրտնջում էր։ Այնտեղ մը-

նալս անկարելի դարձաւ, վերցրի կապոցս, եափնջիս և պատրաստուեցի ծնողներիս մօտ գնալու։ Այդ ժամանակ բալեկամիս դէմքը փայլեց, նա ձեռքս ամուր սեղմեց և ջերմագին մաղթեց.

—Յաջողութի՛ւն, թանկագին բարեկամ... ապրի՛ր, իմ բարեկամ։

—Շնորհակալ եմ—նոյնպէս կեղծելով ասացի ես և մտքումս ծիծաղեցի։ Աշխարհս հօ ողջ կեղծաւորութիւն և խաբեբայութիւն է։

Մէջքս կոտրուած, յուսահատ տուն հասայ։ Հայրս, ինձ որ տեսաւ, այնպէս ուրախացաւ, ինչպէս Քրիստոսի առակի մէջ ծերունի հայրը անառակ որդու վերադարձի վրայ է ուրախացել։ Բայց հետս յիշեալ հօր պէս չը վարուեց... Այն ծերունին Աստծու պատկեր էր, իսկ հայրս—մեր ժամանակի ծնունդ... Երկար զննեց, հազար անգամ նայեց և հազար բան հարցրեց։ Ես ձայն-ծրպտուն չէի հանում, թէև նրա ամեն մի հարցին գլուխս վիատեսակ էի շարժում։

—Խելօքացա՞ր, ժպտալով հարցրեց հայրս։

—Խելօքացել է, դրա չարը տանի դէդէն.—ոգևորուած հաստատեց մայրս։

—Ուրեմն ծառայի՛ր, արհամարհանքով հրամայեց հայրս և այնպիսի աչքով սկսեց դիտել ինձ, որ եթէ հակառակու էի, նրա հայրութիւնից անկասկած զրկուելու էի։

—Ապրուստը դժուար է, որդի... Մարդուս հարկաւոր է ուտել, խմել և ապրել, —իսկ կեանքը քաղցր է... Ծլլում էր մայրս և փաղաքշում...

—Ի հարկէ, ամեն ինչ հարկաւոր է... վնթփնթում էի ես և հետզհետէ հաշտւում այն մտքի հետ, որ ճակատագիրը ինձ ստորին վիճակ էր բաժին տուել։

Մի գեղեցիկ օր, ամենքից արհամարհուած, հագայ մաշուած պիջակս, վիզս անցկացրի օսլայած սպիտակ վզնոց, կապեցի սև փողպատը և կուչ գալով ներկայացայ Պաճոյին, որ մեր գրասենեակի կառավարիչն էր։

Պաճոն վերից վայր և ամեն կողմից ինձ երկար զննեց։ Ես էլ վիզս թաղեցի շապկիս մէջ և փշի վրայ նստած սարեակի նման սկսեցի շուրջս նայել...

—Հըմ... ուրեմն տեղ ես ուզում... պաշտօն... շատ լաւ, մրթմրթում էր Պաճոն և աչքով զննում ինձ։

—Այո՛, պաշտօն տուէք, գործ տուէք... կ՚աշխատեմ Ձերդ գերազանցութեան ուշադրութիւնը գրաւել, մրմնջացի ես։

Պաճոյի դէմքի վրայ ժպիտ երևաց։

Ես ծտի նման թրպտացի, վախեցայ, կարծում էի թէ ծաղրում էր։ Բայց Պաճոն չէր ծաղրում։ Ինչպէս երևում էր, նրան շատ դուր էր եկել «Ձերդ գերազանցութիւն» խօսքը, որ ես արտասանեցի։

—Մանաւոր ծառայութիւնը նրանով է վատ, որ աստիճաններ չեն տալիս—քիչ ժամանակից յետոյ սկսեց Պաճոն,—եթէ աստիճաններ տային, ի հարկէ, մինչև այժմ կը լինէի «գերազանցութիւն»։ Քսան և հինգ տարի է, այս աթոռից չեմ հեռացել... Աշխատում եմ օր ու գիշեր... ուրիշին էլ աշխատեցնելով... Քեզ էլ գործ կը տամ, երիտասարդ պարոն, եթէ... Պաճոն այստեղ խօսակցութիւնը ընդհատեց և նայեց ուղիղ իմ աչքերին... Երևի նա ուզում էր իմանալ իմ սրտի գաղտնիքը։

Ես մի տեղ անշարժ կանգ էի առել գետնի մէջ ցցուած նիզակի նման, ու աչքերս ճպճպացնում էի։ Չը գիտէի, ի՞նչ ասել և ի՞նչ պատասխանել։

—Բայց... շարունակեց Պաճոն... միայն քեզ հետ առաջուց պայման կանեմ։

—Ծոյլ չը պէտք է լինես. չե՞ս լինի։

—Չեմ լինի։

—Ընդիմաբանութիւն չը պէտք է լինի. անելու ե՞ս։

—Ո՛չ։

—Ես լսել եմ, որ դու յանդուգն պատասխանել գիտես, մեծ ու փոքր չես ջոկում։ Այս մեծ անիրաւութիւն է, երդուի՛ր, որ դու ինձ հակառակ չես գնայ, ինչ որ կը հրամայեմ, կը կատարես։

—Երդւում եմ, որ եռանդով կաշխատեմ...

—Ո՛չ, միայն եռանդը բաւական չէ։ Դու սարուկ պիտի լինես (եթէ կարելի է այսպէս ասելքսաներ որդ դարում). երդուի՛ր, որ լեզուդ չես ըլբլացնի...

Չեմ յիշում, երդում կերայ այս անգամ էլ թէ ոչ, այսինքն համաձայնուեցի մեքենայ դառնալ նրա ձեռքին (այն, ինչ որ մի ժամանակ սաստիկ ատում էի). միայն յիշում եմ այն, որ ծառայութեան մէջ ընդունուեցի և ահա երեք-չորս տարի է, ինչ որ հաւատարիմ ծառայում եմ իմ Պաճոյին։ Նա

մինչև անգամ այնքան գործ է փաթաթել գլխիս, որ նոյն իսկ ժամանակ չունեմ մտածելու, թէ ինչ էի, ինչ եմ և ինչ պիտի լինեմ։

. . . . . .

Գնա, հեռացի՛ր, լուսին, պատուհանից մի՛ նայիր, գործից յետ մի գցիր։ Վաղը առաւօտեան այս թղթերը բոլորովին հաշուած, պիտի յանձնեմ, եթէ ոչ...

Մի՞թէ բաւական չէ, ինչ որ ասացի, դու գայթակղի՛չ։ Ների՛ր քո գեղեցկութեամբ այս ամենը, դու որ անմահ Աստծու նման բազմել ես սպիտակ ամպերի վրայ։ Որքան գեղեցիկ, որքան հրապուրիչ ես։ Տեսնում ես, որպիսի նախանձով են նայում քեզ պսպղուն աստղերը։ Մենք էլ նոյնպէս վախկոտ կատուների նման մլաւում ենք բարձր դրասեղանի մօտ ագռաւի նման բազմած Պաճոյին, որովհետև նրանից ողորմութիւն ենք սպասում։

Բաւական է, աղաչում եմ, մի՛ հաճոյանար։ Եթէ գիտենայիր, թէ այսօր Պաճոն ինչ կրակ թափեց գլխիս, անմիջապէս կանհետանայիր սարի՛ միւս կողմը... Կը զարմանայիր տեսնելով, թէ ինչպէս մէկը ստորացնում է միւսին...

Էլի՞ չես հեռանում, փայլի՛ր, թող ջանս դուրս գայ։ Ո՞վ է արդար, որ դու լինես։

Է՜հ, Պաճո՜, Պաճո՜։ Երանի՜ գիտենաս, թէ ի՞նչ կրակ է վառւում սրտումս, ի՞նչ զգացմունքներ է ծնեցնում այնտեղ այս աղաղ, հպարտ լուսինը... Երանի՜ հէնց հիմայ ցոյց տան ինձ իմ պաշտելի էակին... Փո՛ւ, նահլաթ քեզ, չար սատանայ։ Էլի՞ հրապուրելու համար ես կանչում։ Մի՞թէ չես հասկանում, բոլորած լուսին, որ հրապուրուելու ժամանակ չունեմ... Վաղը, վաղը եթէ այս աշխատանքը չը յանձնեմ, ծառայութիւնից կարձակեն և կը մնամ քաղցած... Յետոյ ո՞ւմ դիմեմ։ Նրանց ի՞նչ փոյթ, թէ ես կարող եմ բնութեան մէջ ոչնչանալ...

Օ՜հ, ինչպէս անպատուեց ինձ այսօր մեր Պաճոն։

«Ի՞նչ է պատահել քեզ, այսքան ժամանակ է այս անտէր թղթերը մրոտում ես և էլի մի սիւնեակ միւսից չես կարողանում որոշել, թուերը անկարգ ես շարում»։ Իրաւ նկատեց... Սակայն բացի մեքենայից, ի՞նչ մարդ կարող է իմ աշխատանքը անսխալ կատարել։

Օրացոյցի լեզուն պիտի գործածեմ, որ

կարողանամ նկարագրել իմ աշխատանքը։ Երևակայեցէք, պարոններ, մի թուղթ, ձեր երկարութեամբ և լայնութեամբ։ Այս թուղթը նախշած է հազար ու մի տեսակ գծերով, տասը հազար ցանցերով (վանդակներով)։ Գործարաններից եկած նամակներից պիտի կարդաք առարկայի անունը և արժողութիւնը։ Այս անունը պիտի փնտռէք այս գծերով նախշած թղթի վրայ և արժողութիւն ցոյց տուող թիւը գտնէք պատշաճաւոր ցանցում։ Այսպէս պիտի վարուէք, մինչև որ բոլոր նամակները կը կարդաք և բոլոր ցանցերը թուերով կը լցնէք։ Այս դեռ ոչինչ... Դժբախտութիւնն այն է, որ մինչև հրէայի մեռելի նման ձգուած թղթի վրայ գրչի ծայրով պատշաճ ցանցը կը գտնէք, կարդացած թիւը արդէն մոռանում էք։ Երբ նրան յիշելու համար գլուխներդ ծռում էք նամակների կողմը, կորցնում էք գտած ցանցը և այսպէս ամբողջ օրը կըտցահարի նման շարժում էք գլուխներդ, աչքերիդ զօր տալիս, յիշողութիւնը լարում, մեքենայ դարձած ձեր ամբողջ ոյժը կործանում։ Բայց էլի ոչինչ չի դուրս գալիս։ Անկարելի է, որ չը վրիպէք, ցանցը չը կորցնէք և կամ որևէ թիւ իր տեղից չը հեռացնէք։ Բայց ո՞վ կը ների։ Սխալուեցա՞ք... Ուրեմն վատ աշխատաւոր էք եղել, վերջացաւ գնաց... Առաջ գնալու յոյս էլ մի՛ունենաք, մանաւանդ եթէ Պաճո էլ չէք։

Երանի մի այս սիւնակների հնարողը ձեռքս ընկնի, աշխատեցնեմ իր հնարածի վրայ, որ անիծի իր ծնած օրը... Բայց կարծեմ այս բոլորը գժերին խելօքացնելու համար են հնարել։

Այս առաւօտեան վճռեցի անպատճառ անասելի եռանդով աշխատել և մեր Պաճոյի կշտամբանքը գլխից հեռացնել։ Գծերով նախշած թուղթը կաշեգործի նման բաց արի, քորոցներով ամրացրի սեղանի վրայ, պիջակիս թևերը յետ ծալեցի, ձայնս ինձ քաշած, արտաքին մտածմունքները ներսս սեղմեցի և շնչասպառ սկսեցի թուերը շարել. «տասն արկղիկ լուցկի արժէ վեց կոպէկ», կարդացի գործարանից գրած նամակում։ «Վեց կոպէկ, վեց կոպէկ... լուցկի, լուցկի,—կրկնում էի մտքումս և միևնոյն ժամանակ թղթի վրայ այն ցանցը փնտռում, որի վերևը գրուած էր լուցկի։ Արդէն գըտայ, բայց քանի որ ցանց փնտռելիս գրչի

թանաքը արդէն ցամաքել էր՝ ցանցը ծածկեցի ձախ ձեռքի ցուցամատով, գրիչս թաթխեցի թանաքի մէջ և հանգիստ սրտով յիշեալ ցանցում գրեցի «վեց»։ Ինչպէս երեւում է, ես լուցկի ցանցի մէջ չէի նշանակել այն անիծուած «վեց»-ը,—մատս վրիպել էր և անտէր «վեց»-ը ուրիշ տեղ էի գցել։

Վերջացրի «տեղեկագրի» կազմելը, արագ շունչ քաշեցի և ինքնագոհութեամբ մատուցի մեր Պաճոյին։ Պաճօն սկսեց զննել։ Լորի նման շունչս կտրեցի և սկսեցի հետևել նրա դէմքի արտայայտութեանը։ Սիրտս դողում էր, քանի որ գիտէի Պաճօն սխալը երբէք չէր ների։ Մնացած ընկերներս լուռ ու մունջ աշխատում էին, ամեն մէկը իր գործի վրայ էր։ Գրասենեակում մեռելային լռութիւն էր թագաւորում, միայն այս մեռելային լռութիւնը խանգարում էր գրիչների անհաճոյ ճռճռոցը։

Յանկարծ լսուեց Պաճոյի հեգնական հռհռոցը, կարծես ձի էր խրխնջացողը։ Ծառայողները գլխները բարձրացրին և միմեանց նայեցին։ Մի քանիսը ծիծաղող մեծաւորին տեսնելով՝ իրանք էլ աննպատակ ու յիմարաբար սկսեցին ծիծաղել, ուզում էին մե-

ծաւորի սիրտը շահել։ Ինձ մահուան քրքջանք պատեց...

Ի՞նչ, տասը փութ երկաթն արժէ վեց կոպէ՜կ։ Հա՛, հա՛, հա՛, խրխնջում էր Պաճօն և իր ծաղրալի հայեացքով դիտում...

—Ա՜յ, կրկին մռնչաց Պաճօն, հարիւր աւելն արժէ... ապա նայի՛ր, երիտասարդ պարոն, ի՞նչ գին ես նշանակել հարիւր հատ հասարակ աւելի համար, հեգնելով դիմեց ինձ։

Ես գունատուեցի, աչքերս խառնուեցին, ոչինչ չը կարողացայ տեսնել։

—Պա՛րոններ, դիմեց Պաճօն իմ ընկերներին... այս երիտասարդի կարծիքով հարիւր հատ աւելը արժէ... ապա գուշակեցէք ո՞րքան։

Ծառայողները սկսեցին քրքջալ... ինքնագոհ դէմքով աշխատում էին գուշակել։

—Չէ՛ք կարող գուշակել։ Հարիւր աւելըն արժէ հարիւր ռուբլի։ Հա՛, հա՛, հա՛։ Ա՛յ այսպիսի մշակ է հարկաւո՛ր։ Պաճօն էլ չէր հանգստանում։

Այն րոպէին ես մի քանի անգամ մեռայ և էլի կենդանացայ։ Արիւնս սկսեց արագ շարժուել և ես անիծում էի նրան, ով

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССРА

որ ինձ ամաչացնելու համար այս սիւնեակները հնարեց... Պաճոն ծանր ծալեց «տեղեկագիր»-ը և առջևս դնելով ասաց.—«Տա՛ր տուն, արտագրի՛ր, հաշուի՛ր և վաղը առաւօտեան բե՛ր: Միայն եթէ էլի սխալներ անես, այն ժամանակ «պրաշչայ» (մնաս բարեաւ):

Այժմ հօ լսեցիր, լուսին, որ իմ մեղքի պատճառ ես դառնալու: Գործից յետ մի՛ գցիր. հեռացիր, ի սէր Աստծու, իմ պատուհաններից:

Ո՜հ, Արարիչ Աստուած: Ինչո՞ւ մեքենայ չեմ: Ինչո՞ւ տուիր ինձ մարդկային հոգի, խելք և զգացմունք, երբ այսպիսի Պաճոների ծաղրի առարկայ և խաղալիք պիտի դառնայի:

ՎԵՐՋ

Гос. Публ. Библиотека
ССР А
им. А. Мясникяна

ՀՀ Ազգային գրադարան
NL0381908

74.564

ՎՐԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

		Կ.
1.	Նինօշվիլի Է. «Հրաման» (պատմուածք)	5
2.	Խուսկիվաձէ Թ. «Գերեզմանատանը» (էսկիզ)	3
3.	Դուտու-Մէգրելի «Անմեղ զոհ» (պատկեր ժողովրդի կեանքից)	8
4.	Ղազրէգի Ս. «Ֆաթի» (Զատկական պատմուածք)	5
5.	Էկալաձէ Իա. «Լուսնեակ գիշերին...» (էսկիզ)	5

Ցանկացողները կարող են դիմել՝ Զաքարիա Գրիգորեանցի «Կովկասեան գրավաճառանոցը»։

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.